

## Արձանագրություն N 1-09/18

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2018 թ.-ի  
սեպտեմբերի 5-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Յ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Յակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Թոքմաջյան Վ.Յ., Գրիգորյան Թ.Գ., Առաքելյան Ա.Ա., Մուսայելյան Վ.Ս., Ավետիսյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Յարությունյան Մ. Ա., Չաքարյան Գ.Է.:

Յրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Յարությունյան Ռ.Մ.:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսման որակի ապահովմանն ուղղված միջոցառումների մասին:

2.Ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման ընթացքի մասին:

3.Այլ հարցեր

**Լսեցին 1** - Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսման որակի ապահովմանն ուղղված միջոցառումների մասին:

**Որոշեցին 1** – Յանձնարարել ամբիոնների վարիչներին երկու շաբաթյա ժամկետում քննարկել և առաջարկություններ ներկայացնել ուսման որակի բարելավմանն ուղղված ծրագրերի մասին:

**Լսեցին 2** - Ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման ընթացքի մասին:

**Որոշեցին 2** – Ամբիոններում ուսումնական գործունեության կազմակերպման և ընթացքը ուսումնասիրելու համար կազմակերպել աշխատանքային խմբեր՝ ռեկտորի տեղակալ Ռ.Յարությունյանի ղեկավարությամբ: Աշխատանքային խմբում ընդգրկել ռեկտորի տեղակալին, համապատասխան ֆակուլտետի ղեկանին, ամբիոնի վարիչին և առաջատար դասախոսին ու կրթական ծրագրերի որակի ապահովման և պրակտիկայի բաժնի պետին:

**2.2** - Սույն թվականի հոկտեմբերի 1-ից ամբիոններում իրականացնել ուսումնական գործընթացի կազմակերպման ուսումնասիրություններ և արդյունքները ներկայացնել ռեկտորատի նիստին:

**Լսեցին 3.1** – Ռեկտորատի քննարկմանը ներկայացվեց պրոռեկտոր Ս.Գալստյանի ներկայացումը, համաձայն որի առաջարկվեց, հաշվի առնելով «Գլոբալ Տրանս Սերվիս» «ՇՏՅ-ՇՅԾԶԲ-18/6» ՍՊԸ–ն հետ կնքած պայմանագրի ծախսատարությունը, մրցութային կարգով ձեռք բերել ՖՕՌԴ մակնիշի կիսաբեռնատար ավտոմեքենա, որը կօգտագործվի ուսումնասիրոճնական հողամասից բերքը վերամշակման կետ հասցնելու և վերամշակված արտադրանքը իրացնելու համար:

**Որոշեցին 3.1** - Յաշվի առնելով «Գլոբալ Տրանս Սերվիս» «ՇՏՅ-ՇՅԾԶԲ-18/6» ՍՊԸ–ն հետ կնքած պայմանագրի ծախսատարությունը մրցութային կարգով ձեռք բերել ՖՕՌԴ մակնիշի կիսաբեռնատար ավտոմեքենա, որը կօգտագործվի ուսումնասիրոճնական հողամասից բերքը վերամշակման կետ հասցնելու և վերամշակված արտադրանքը իրացնելու համար:

**Լսեցին 3.2** – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի առարկայական պարտքեր ունեցող ուսանողների պարտքերի մարման շրջանը հետաձգելու մասին:

**Որոշեցին 3.2** - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի առարկայական պարտքեր ունեցող ուսանողների պարտքերի մարման շրջանը հետաձգել մինչև ուսումնական պարապմունքները սկսելու նախօրյակը:

Նախագահ՝ ստորագրություն **Յ.Վ.Թոքմաջյան**  
Քարտուղար՝ ստորագրություն **Ա.Ա.Առաքելյան**